

ՄԻՌ ՄԱՏՆԵՔ

Ես միշտ ինձ հարց եմ տալիս. որն է տարբերութիւնը քրիստոնեութեան եւ միւս կրօնների միջեւ: Այն, որ յաւիտենական կեանք է խոստանում՝ միւս կրօններն ել ունեն: Այն, որ բարութիւն եւ ազնութիւն է քարոզում՝ այդ դեպքում կրիշնայիզմն աւելի բարի կրօն է: Նոյն պահեն ու ծեսերը, մեղանչումն ու մեղերի բողութիւնը, միակ Աստուծոյ գաղափարը միւս կրօններում ել առկայ է: Ուրեմն ո՞րն է քրիստոնեութեան առաւելութիւնը: Պատասխանը հետեւեալն է. Քրիստոս եւ իր ապրած կեանքը: Եթէ միւս կրօններն ու նրանց հիմնադիրները աւելի գաղափարախօսներ ու փիլիսոփաներ են, Քրիստոս ապրուած եւ ապրո՞ղ կեանք է: Նա իր կեանքով մեզ օրինակ դարձաւ:

Եթէ ընդունում ենք, որ այսօր էլ Յիսուս մեզ հետ է ու մեր մէջ, կը նշանակի այսօր էլ նոր Կտակարանը շարունակում է: Կը նշանակի այսօր էլ Բերդեհեմի աստղը ցոլում է երկնակամարում՝ կեանքի մոլորուած հոգիներին ուղեցոյց: Այսօր էլ մենք, Մարիամի ու Մարթայի պէս, ողբում ենք մեր հանգուցեալներին ու մտածում՝ եթէ Աստուած լիներ, մեր հարազատը չէր մեննի: Այսօր էլ անառակ որդիների պէս շատերս թափառում ենք թախտի նաւով՝ մոռացած հօրենական տուն ու Հայրենիք: Ինչպէս միշտ, այսօր էլ մեր շուրջն են փարիսեցին ու մաքսաւորը, թերահաւատ Թովմասը, կարնահասակ Զաքոնն ու ձեռները լուացող Պիղատոսը, մատնիչ Յուդան եւ աստուածասպան ամբոխը:

Ամէն բան իր տեղում է: Դերերը նոյնն են: Միայն անցել է երկու հազար տարի, եւ այլ են դերակատարները: Մենք ենք դերակատարները:

Այսօր ուզում եմ խօսել դրանցից մէկի մասին. Յուղա Խսկարիովուացի: Բայց ոչ թէ խօսել մէկից, որն ապրել է երկու հազար տարի առաջ, այլ այն Յուղայի, որ այսօր էլ կա'յ եւ ապրում է: Մե՛ր միշի Յուղայի: Քանի որ, երբ մենք սկսում ենք խօսել Քրիստոսի ժամանակներից, ստացում է մենք խօսում ենք անցած-գնացածից: Ո՛չ, այդ մօտեցմամբ մենք սպանում ենք քրիստոնեութիւնը: Հերովդէսն այսօ՞ր էլ փնտոում է նորածին Արքային: Բարի սամարացին մեր մէջ է միշտ: Եւ Յուղան մատնում է երեկ, այսօր եւ վաղը:

Ո՞րն է տարբերութիւնը Յուդայի եւ միւս մեղաւոր մարդկանց միջեւ: Ինչու՞ Յիսուս ներեց գողին, աւազակին, շնացողին ու անառակին, բայց չներուեց Յուղան: Արդեօ՞ք անարդարութիւն չէ:

Եթէ մակերեսօրէն մտածենք, Յուղայի արարքը մեծ յանցանք չէր: Ինչու՞: Որովհետեւ Յիսուսին բոլորն էին նանաչում: Նա քարոզում էր երես առ երես, տաճարում ու փողոցներում, ժողովրդի մէջ, բաց, անվախ: Նա ոչ ոքից չէր թաքնւում, եւ բոլորն էլ գիտէին նրան:

Յուղան ուղղակի ցոյց տուեց մէկին, ում բոլորը նանաչում էին: Ուրեմն ինչու՞ այդքան անողոք լինենք մարդու հանդեպ:

Այդ ամէնը սակայն առաջին հայեացքից: Փորձենք գտնել բուն արմատը եւ փորձենք հասկանալ՝ ինչ ասել է մատնիչ: Աստուած հանդուրժում է բոլոր մարդկային մեղքերը եւ պատրաստ է ներելու: Բայց Աստուած չի' ներում մատնիչներին: Մանաւանդ, երբ մատնում են սուսիկ-փուսիկ, ժպտերես, կեղծ բարոյականութեան, ու համբոյրի բողի տակ:

Ո՞վ է մատնիչը: Թիշենք Հայոց պատմութիւնը: Քանի-քանի բերդեր են ընկել մատնիչների պատճառով: Քանի անմեղ կեանքեր ու նակատագրեր են խարարուել նրանց մատնութեամբ: Մատնիչն ունի մարդկային բոլոր մեղքերը՝ հպարտութիւն ու նախանձ, չարութիւն ու ատելութիւն, վախսկոտութիւն ու խորամանկութիւն:

Ո՞վ է մատնիչը: Մատնիչը նա է, որին գործածում ու վերջում լիում է հենց գործածողը: «Այսօր իրեն մատնեցիր, վաղն էլ ինձ ես մատնելու»: Ահա՝ աքսեռմը: Այս է մատնիչի վախնանը:

Ռուս մեծ մանկավարժ Սոլյումլինսկին պատմում է.

«Երբ ինձ նշանակեցին յատուկ ուղղիչ դպրոցի տեսուչ, ես մտածում էի' ինչպէս կառավարել երկու հազար գող ու աւազակ, 14-ից 18 տարեկան յանցագործ տղաների: Մի քանի օրից ինձ մօտ կանչեցի եօթ աշակերտի, որոնց ժիշ թէ շատ վստահում էի եւ ասացի, որ պէտք է ինձ օգնեն, որպէսզի կառավարենք դպրոցը: Տղաների մէջ նրանք պէտք է տեսնէին ինչ է կատարուում եւ ինձ տեղեկացնէին:

«Մի քանի ամսից ես տիրում էի իրավիճակին: Իմ աշակերտները գալիս ու ինձ պատմում էին օրուայ լուրերը: Ես սաստում էի զանցառուներին, պատժում, վտարում: Այդ եօթ հոգին բարեխնորդն կատարում էին իրենց տեսչի յանձնարարութիւնը: Մակայն մի քանի ամսից դադարեցրի իմ աշխատաձեւը: Ես սարսափեցի:

«Ես դաստիարակում էի եօթ լրտես, ես դաստիարակել էի եօթ մատնիչ: Եւ որոշեցի: եթէ այնպիսին չպէտք է լինեմ, որ ինձ հաւատան, վստահեն ու կիսուեն ինձ հետ, ուրեմն ես մանկավարժ չեմ»:

Աշակերտները սխալ լուրեր չէին տալիս իրենց տեսչին:

Նրանք յայտնում էին այն, ինչ կատարում էր դպրոցում, աշակերտների սխալ արարքներն էին պատմում: Արտաքին հայեացքից նրանք նիշշդ են, նրանք սուտ չեն խօսում:

Ճիշդ են, բայց ո՞չ նշարիս: Ճիշդ են, բայց ո՞չ բարի: Ինչպէս Յուղան: Նա ճիշդ ցոյց տուեց իր Ռւսուցին, բայց նշարիս չէր նա: Քանզի «Ամեն ճիշդ չէ, որ բարի է, բայց ամեն բարի նշարիս է», ասել է ներսէս Շնորհալին:

Մեզ բւում է, որ մատնութեամբ, զրպարտութեամբ, ուժով, չարախօսութեամբ կարող ենք յաղթանակներ արձանագրել մեր կեանքում: Բայց սութեամբ կարող ենք յաղթանակներ արձանագրել մեր կեանքում: Գուցէ մատնութիւնն ու դա մարդու կակազ մտքի արդիւնքն է: Գուցէ մատնութիւնն ու

գրպարտութիւնն էլ կարող են յադրանակներ տօնել, բայց որքա՞ն կարճատել են դրանք: Վկան՝ մարդկութեան պատմութիւնը: Եւ միայն սիրոյ յադրանակն է մնայուն ու յաւերժական: Վկան՝ Յիսուս Քրիստոս: Նոյնիսկ աշխարհակալ նապոլէոնը կեանքի վերջում խոստովանեց. «Ես ոչ մի բանի առաջ ծունկի չեմ գայ, միայն Աւետարանի: Որովհետեւ ես աշխարհը գրաւեցի գենքով, Յիսուս դա արեց առանց գենքի,սիրով»:

Ամենին էլ ունենք մեր սխաներն ու թերութիւնները, մեղաւոր ենք, ինչպէս Յիսուսի աշակերտները: Շատերը լինեցին Յիսուսին, Պետրոսն ուրացաւ, Թովմասը կասկածեց նրա Յարութեանը, միւսները դաւանանեցին ու փախան Խաչից ու Խաչեալից: Բայց բոլորն էլ մեծ քարոզիչներ դարձան ու չյիշուց նրանց սխաները: Միայն Յուդան կրեց մատնիչի անսրբելի խարանը, մարդկութեան յաւերժական անէծքը, միայն Յուդան է տառապում դժոխքում:

Ովքե՞ր են մատնիչները: Դանքէ Ալիգերիի «Աստուածային կատակերգութեան» մէջ դժոխքի ամենաստորին խորխորատներում տառապում են մատնիչներն ու հայրենիքի դաւանանները:

Մի՛ մատնէք: Որպէսզի ձեզ տեսնելով նամրան չշեղեն ձեր ընկերները: Որպէսզի ձեր մօտենալով խօսակցութիւնը կիսատ չքողնեն ձեր իսկ քարեկամները:

Մի՛ մատնէք: Թող ձեր պատճառով մարդիկ չդատուեն: Թող ձեր պատճառով մարդիկ չխաչուեն: Լաւագոյն դեպքում, Պիղատոսի պէս լուացէք ձեր ձեռները եւ ինչ լինելու է բող լինի, բայց մի՛ խարուէք երեսուն արծար առաջարկող փարիսեցու կակազ խօսքին: Որպէսզի չլսէք Տիրոջ ձայնը.

-Յուդա՛, համրութելո՞վ ես մատնում ինձ:

Մի վերցրէք կեանքի այդ դերը: Մի՛ խաղացէք այն:

Եւ բող Աստուած լուսաւորի մեր հոգիները, կեղծն՝ իրականից, ստրկութիւնը՝ ստրկամտութիւնից, հաւատքը՝ հաւատալիքներից, եւ նշմարտութիւնը մատնութիւնից տարբերելու մեծ շնորհը, այժմ եւ միշտ եւ յափառանս յափառենից: Ամեն:

ԸՆԾԱՆՈՒԵՐ ԱԲԴ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ